Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական
միջազգային
կենտրոնի տնօրեն՝
Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետվություն 2019

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի բաժնի

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի բաժինն ամփոփում է 2019 թ. գործունեությունը և ներկայացնում տարվա ընթացքում բաժնի կողմից կատարված գործառույթներն ու միջոցառումները:

- Տարվա կարևոր գործողություններից էր «Դասավանդի՛ր, Հայաստան» առաջնորդության զարգացման ծրագրի ներկայացուցիչների այցը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն: Հանրային կապերի և կարիերայի բաժնի նախաձեռնությամբ հանդիպեցին մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման տարբեր մասնագիտությունների ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին ծրագրի առաջարկներն ու հնարավորությունները: Հավաքագրվեցին ծրագրի մասնակից ուսանողների տվյալները:

- Դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը կայացավ ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում: Միջոցառման պաշտոնական բացումը կատարեց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը՝ շնորհավորելով շրջանավարտներին այս հիշարժան օրվա առթիվ:

- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի նախաձեռնությամբ սույն թվականի մարտի15-17-ը Ծաղկաձորում կազմակերպվեց «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ միջամբիոնային կապերի սերտացում և որակի ներբուհական համակարգի զարգացում» համաժողովը, որին մասնակցեց նաև հանրային կապերի և զբաղվածության բաժնի պետ Ա. Շահազիզյանը՝ ակտիվորեն լուսաբանելով կատարվող գործողությունները:

- մարտ ամսին կայացավ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունը, որի կազմակերպչական աշխատանքներն իրականացվում էին բաժնի միջնորդությամբ:

- ապրիլին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հանրային կապերի և կարիերայի զարգացման բաժնի, ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի համատեղ ջանքերով կայացավ ամենամյա ինտելեկտուալ խաղ, որին մասնակցում էին Կենտրոնի տարբեր մասնագիտություններում սովորող ուսանողները՝ կազմելով 6 մրցակցային թիմեր:

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի զարգացման բաժնի և Կենտրոնի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ ԳԿՄԿ ուսանողները հնարավորություն ունեցան մասնակցելու «Բոուլինգի ֆեդերացիայի» կազմակերպած ուսանողական գավաթի առաջնության նախնական փուլին, որը կայացավ «Արենա» ժամանցային կենտրոնում: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ներկայացնող թիմում ընդգրկված էին տարբեր մասնագիտությունների մագիստրանտներ:

- հանրային կապերի և կարիերայի զարգացման բաժինը հանդիպում էր նախաձեռնել «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Հանդիպում-դասընթացը նվիրված էր էներգաարդյունավետության, էներգախնայողության և էներգետիկ համակարգի հիմնախնդիրներին և մարտահրավերներին:

- Կենտրոնի հանրային կապերի և զբաղվածության բաժնի պետ Ա. Շահազիզյանի աջակցությամբ տուրիզմի բաժնի ուսանողներն այցելեցին «The Alexander, A Luxury Collection Hotel, Yerevan 5*» հյուրանոց՝ «Հյուրանոցում ծառայությունների կազմակերպումը և կառավարումը» դասընթացի գործնական դասախոսություն անցկացնելու նպատակով: Հյուրանոցում մագիստրանտները ծանոթացան մարքեթինգի բաժնին, ընդունելության և տեղավորման ծառայության աշխատանքին, հյուրանոցային ծառայությունների ամրագրման տեսակներին, ինչպես նաև լսեցին դասախոսություն՝ հյուրանոցային համարների ստանդարտացման վերաբերյալ, եղան «Նախագահական», «Ապարտամենտներ», «Սյուիտ», «Լյուքս» համարներում:

- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հանրային կապերի և կարիերայի բաժնի և «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի միջև ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա Գիտակրթական միջազգային կենտրոնը ներկայացնող ուսանողական կամավորական թիմը մասնակեց Տավուշի մարզի սահմանամերձ Կոթի և Բերդավան համայնքներում իրականացվող լեդֆիկացման ծրագրին:

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈւԽ և ԳԿՄԿ հանրային կապերի բաժնի նախաձեռնությամբ հանդիպում իրականացվեց «Համագործակցության փոխօգնության համազգային կառույց»կազմակերպության հիմնադիր տնօրեն Արշակ Սադոյանի հետ:

- տեղի ունեցավ սեմինար-քննարկում «C-Quadrat Ampega Armenia» ընկերության հետ, որին մասնակցում էին ԳԱԱ ԳԿՄԿ-ի Գործարար Վարչարարության ֆակուլտետի մագիստրանտները:

- ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակում տեղի ունեցավ «Բուհ-քաղաքացիական ծառայության համակարգ համագործակցության գործուն մեխանիզմների ձևավորում» թեմայով հանդիպում-քննարկում: Քննարկմանը մասնակցեց նաև ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հանրային կապերի և զբաղվածության բաժնի պետ Ա. Շահազիզյանը:

- ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Իրավագիտության բաժնի ուսանողները բացառիկ հնարավորություն ստացան մասնակցելու ՀՀ փաստաբանական դպրոցում տեղի ունեցող իրավաբանական դասընթացներին, որոնք իրականացվում էին ԱՄՆ պետական դեպարտամենտի Թմրադեղերի դեմ միջազգային պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի ծրագրի շրջանակում:

- հանրային կապերի և կարիերայի բաժնի և ՈւԳԸ-ի նախաձեռնությամբ Գիտակրթական միջազգային կենտրոնում անցկացվեցին «Քաղաքական կառավարում» թեմայով դասընթացներ, որոնց մասնակցում էին ինչպես ԳԿՄԿ, այնպես էլ այլ բուհերի ուսանողներն ու շրջանավարտները: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության հեռանկարներն ու մարտահրավերները, Հայաստանի արտաքին քաղաքականության ռազմավարությանը վերաբերող հարցեր և այլ կարևոր խնդիրներ:

- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի լեզվաբանության ամբիոնի, հանրային կապերի և կարիերայի կենտրոնի, ինչպես նաև ՈւԳԸ նախաձեռնությամբ ս.թ. հուլիսի 11-ին գիտակրթական միջազգային կենտրոնում տեղի ունեցավ «*Հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ*» խորագրով մեկօրյա բացառիկ դասախոսություն:

- հուլիսի 2-20-ը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնի, հանրային կապերի և կարիերայի բաժնի և ՈւԳԸ-ի կողմից կազմակերպվեց «Ամառային իրավագիտական դպրոց», որի նպատակն էր բարձրացնել հասարակության իրավագիտակցությունը: Դասընթացների կազմակերպումը լավագույն հնարավորություն էր նաև գիտակրթական միջազգային կենտրոնի լավագույն մասնագետ շրջանավարտների հետ համագործակցելու համար:

- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հանրային կապերի և զբաղվածության բաժնի, ԳԿՄԿ դասախոս, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Ս. Բաբայանի նախաձեռնությամբ մագիստրատուրայի իրավագիտության ամբիոնի 1-ին կուրսի ուսանողները այցելեցին ՀՀ փաստաբանների պալատ, որտեղ ծանոթացան կառույցի ստորաբաժանումներին, աշխատանքային գործընթացներին:

- Բաժնի և «Մարդու իրավունքների և ցեղասպանագիտության կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ հանդիպում-քննարկում կազմակերպվեց Փարիզի «Չոպանյան ինստիտուտի» հիմնադիր նախագահ Վարուժան Սիրափյանի հետ: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենի պաշտոնական ընդունելությունից հետո պարոն Սիրարփյանն առանձին հանդիպում ունեցավ Գիտակրթական միջազգային կենտրոնի աշխատակիցների և ուսանողների հետ:

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման, հանրային կապերի և զբաղվածության բաժինների, ինչպես նաև տնտեսագիտության և կառավարման ամբիոնի նախաձեռնությամբ հանդիպում էր կազմակերպվել «Շուկայագիտություն (Մարքեթինգ)» մասնագիտության նախկին շրջանավարտների հետ:

  Հանդիպման ընթացքում քննարկվեցին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Շուկայագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, վեր հանվեցին մասնագիտական և մանկավարժական պրակտիկաների կազմակերպմանն առնչվող մի քանի հարցեր:

- «Գլոբալ ձեռներեցության շաբաթվա» 2019 թվականի միջոցառումների շրջանակում "CareerLab"-ը ԱՄՆ դեսպանատան հետ համատեղ կազմակերպել էր «Կարիերայի և ձեռնարկատիրության տոնավաճառ», որին իր մասնակցությունն էր բերել նաև ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և զբաղվածության բաժնի պետ Ա. Շահազիզյանը ԱՄՆ դեսպան Լինն Թրեյսիին ներկայացրեց Կենտրոնի առաքելությունը, առաջարկվող մագիստրոսական և ասպիրանտական կրթության հնարավորությունները, նվիրեց կենտրոնի հրատարակած գիտական հոդվածների ժողովածուն:

- Կենտրոնի հանրային կապերի և զբաղվածության բաժնը, ՈւԽ և ՈւԳ կառույցները կազմակերպել էին ինտելեկտուալ խաղ, որին մասնակցում էին մրցող 9 խմբեր:

- նոյեմբերի ավարտվեց ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հանրակին կապերի և զբաղվածության բաժնի և ԳԿՄԿ ՈՒԳԸ-ի կազմակերպած քաղաքագիտական դասընթացների շարքը: Դասընթացները միտված էին կենտրոնի շրջանավարտների և ուսանողների քաղաքագիտական գիտելիքների բարձրացմանը: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին ՌԴ և ԱՄՆ աշխարհաքաղաքական խնդիրները, համեմատվեցին հայկական և մերձավորարևելյան քաղաքական դաշտերում տիրող իրավիճակները: Բանախոսություններով հանդես եկան ԳԿՄԿ դասախոսները, ինչպես նաև ոլորտի լավագույն մասնագետները, որոնք իրենց գիտելիքներն ու փորձը հաղորդեցին դասընթացի մասնակիցներին:

- «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» կարողությունների զարգացման Էրազմուս+ ծրագրի շրջանակներում բաժինը կազմակերպել էր հանդիպում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի տարբեր տարիների շրջանավարտների հետ՝ քննարկելու «Բնապահպանություն և բնօգտագործում» մագիստրոսական կրթական ծրագրի առարկայական ծրագրերի բովանդակությունը, շրջանավարտների մասնագիտական ակնկալիքները մինչև ընդունվելը և գոհունակությունը ավարտելուց հետո:

Բաժնի կողմից մշտապես իրականացվում է շրջանավարտների զբաղվածության տվյալների հավաքագրման և թվայնացման աշխատանքներ, որը հետագայում հիմք է ծառայում տարբեր գործատուների կողմից համապատասխան թափուր հաստիքների համալրման նպատակով:

ԳԿՄԿ բարձր համբավի ապահովման և հանրային կապերի ամրապնդման նպատակով՝ բաժինը մշտապես լուսաբանում է ԳԿՄԿ տարբեր միջոցառումներն ու ծրագրերը Կենտրոնի սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքում և ակտիվորեն համագործակցում է տեղական բոլոր լրատվական միջոցների հետ՝ տրամադրելով տարբեր նյութեր, հարցազրույցներ՝ ինչպես նաև մասնակցում ռադիո և հեռոստահաղորդումների:
Հաշվետու տարում բաժնի կողմից պատրաստվել և պաշտոնական կայքում լուսաբանվել է ընդհանուր 42 տեղեկատվական նյութ, 6 տեսանյութ:
Մոտ 6 տասնյակ ԶԼՄ կայքերի կողմից լուսաբանվել են Կենտրոնի տարբեր միջոցառումներ և ծրագրեր: Բաժնի կազմակերպմամբ Կենտրոնի ներկայացուցիչները մասնակցել են 4 ռադիո և հեռուստահաղորդումների: